The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by
the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրամիության կողմից

BRITISH COUNCIL

ICHD

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ

International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

«Արտագնա աշխատանքների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծն՝ ըստ էության

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Աշխատանքային միգրացիայի պետական կարգավորում. լինե՞լ, թե՞ չլինել

Պետական շահագրգիռ կառույցների և ոլորտի խնդիրներով զբաղվող փորձագետների ու մասնագետների կողմից հարցի պատասխանը կարծես թե միանշանակորեն տրված է: Այո՛, հաշվի առնելով ինչպես ներքին սոցիալական, այնպես էլ արտաքին՝ համաշխարհային աշխատանքային շուկայի միտումներն ու իրողությունները, ինչպես նաև այն համաձայնագրերի պահանջները, որոնց միացել է Հայաստանը (Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 97 կոնվենցիա, Եվրոպայի Խորհրդի սոցիալական խարտիա) այս ոլորտը պիտի՛ ենթարկվի պետական կարգավորման:

Այսպիսով, խնդրի շուրջ մեզանում առկա է սկզբունքային համաձայնություն: Հարցը, թերևս, հետևյալն է՝ ինչպե՞ս և ի՞նչ գործիքակազմով կարգավորել ոլորտը:

Արտագնա աշխատանքների կարգավորման անկյունաքարը

ՀՀ ՏԿՆ ՄԳ կողմից մշակված «Արտագնա աշխատանքների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի անկյունաքարը *արտագնա աշխատանքի մեկնողների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքների* տրամադրումն է:

Արտաքին աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ խնդրի լուծումը երբեմն աշխատանքի տեղավորման երկրի իրավասության դաշտ է տեղափոխվում՝ ավելի մեծացնելով աշխատուժն արտահանող երկրում կանխարգելիչ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը: Ուստի անհրաժեշտ է.

- էապես սահմանափակել արտերկրներում աշխատանք առաջարկող կազմակերպությունների ազատությունը քաղաքացիներին խաբելու, արտերկրում առանց փողի և իրավաբանական աջակցության թողնելու հարցում,
- կարգավորել միջնորդի, աշխատանքային միգրանտի, օտարերկրյա գործատուի և պետական մարմինների հարաբերությունները,
- կարգավորման շրջանակներում պայմանագրային հարաբերությունների համակարգի զարգացման միջոցով միջնորդի վրա դնել ինչ-որ իմաստով նաև երաշխավորի դեր:

Նպատակը՝ իրավունքների ու շահերի պաշտպանություն

Օտարերկրյա պետություններում աշխատանքի տեղավորումը պարունակում է ռիսկերի ընդգրկուն շրջանակ: ՀՀ-ում քաղաքացիներին ոչ լիարժեք ծառայության մատուցման և խաբեության դեպքերի կանխման խնդրի լուծման նպատակով առաջարկվում է կիրառել հետևյալ գործիքակազմը.

- լիցենզավորում,
  - հարաբերությունների պայմանագրային կարգավորում՝
  - նախասիրությունների պայմանագիր արտագնա աշխատանքի մեկնողի և միջնորդի միջև,
  - աշխատանքային պայմանագիր արտագնա աշխատանքի մեկնողի և օտարերկրյա գործատուի միջև,
  - միջնորդի և օտարերկրյա գործատուի միջև պայմանագիր:
  - լիազոր մարմնի կողմից տեղեկատվական քարոզարշավի ծավալում և խորհրդատվության իրականացում,
  - լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից արտագնա աշխատանքների կազմակերպման մասին ՁԼՄ-ներով գովազդի արգելում:

Հետքա՞յլ ազատականության սկզբունքից

Վերը նշված գործիքներից թերևս ամենամեծ դիմադրության կարող է արժանանալ լիցենզավորման գաղափարի ներմուծումը: Ընդդիմախոսները համարում են, որ դրանով մենք կրկին մեկ քայլ հետ ենք գնում տնտեսության և տնտեսական հարաբերությունների ազատականացման ճանապարհին: Կա նաև մտավախություն, որ հայկական իրականության մեջ այդ գործիքը կբերի մի շարք բացասական երևույթներ՝ մասնավորապես կոռուպցիա, ոլորտի ստվերայնացում, ծառայության գների բարձրացում: Կոռուպցիայի ռիսկը միշտ էլ կա, երբ անձը հարաբերություն ունի պետական պաշտոնյայի հետ: Սակայն այսպիսի մտավախությամբ առաջնորդվելու դեպքում Հայաստանում լիցենզավորման ոչ մի տեսակ չպետք է ընդունվեր:

Այնուհանդերձ, միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ քաղաքացիների իրավունքների և շահերի ոտնահարման կանխարգելման հարցում լիցենզավորումը վերոհիշյալ գործիքներից ամենից կիրառելի և արդյունավետ մեխանիզմն է:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

«Անտառ մտնողը գելից չի վախենա»

Ի՞նչ կարող ենք անել: Ստեղծված իրավիճակում գուցե պետք է ընդունել լիցենզավորման գաղափարը, զուգահեռաբար գտնելով լուծումներ, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնել դրա ներդրման հետ կապված բացասական հետևանքները Հայաստանում: Անշուշտ, տնտեսական դաշտում առավել ազատական մոտեցման տեսանկյունից կարելի է ընդունել, որ որքան շատ ոլորտներ հնարավոր լինի «ազատել» լիցենզավորման «ճիրաններից», այնքան լավ տնտեսության համար: Սակայն մարդկային ռեսուրսների տեղափոխությունը չի կարելի նույնացնել կոշիկի արտահանման ճանապարհով շահույթ ստանալու հետ: Որոշում ընդունելիս նախ և առաջ պետք է նժարների վրա դնել լիցենզավորման ներդրման վտանգները և քաղաքացիների իրավունքներն ու շահերը: Այդ դեպքում կտեսնենք, որ իրավունքների և շահերի պաշտպանության նժարն ավելի ծանր է կշռում, որովհետև ամեն քայլափոխի կհանդիպենք ոտնահարման զանգվածային դեպքերի:

Լիցենզավորման գաղափարի ընդդիմախոսները շեշտում են, որ լիցենզավորումը պետական պաշտոնյաների ձեռքին իրենց շահերը միակողմանի առաջ տանելու համար գործիք է: Չվիճարկելով մոտեցումը, նշենք, որ մյուս կողմից լիցենզիայի ներդրումը կարող է ապահովել տնտեսավարող սուբյեկտների համար արտոնյալ պայմաններ. պետական ինստիտուտների մասնակցությամբ արտերկրում հայտնաբերված թափուր աշխատատեղերի, ինչպես նաև միգրացիոն գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմինը կտրամադրի միջնորդ կազմակերպություններին, հետևաբար՝ կստեղծվեն աշխատանքների կազմակերպման արդյունավետ հիմքեր: Ինչպես ասվում է ռուսական հանրաճանաչ դարձվածքում՝ «Սատանան (իմա՝ լիցենզավորումը) այնքան վախենալու չէ, որքան նրան ներկայացնում են»:

Գների բարձրացման մասին խոսելիս, հարց տանք ինքներս մեզ. ո՞րն է ավելի նախընտրելի՝ ավելի մեծ գումար վճարել և օգտվել որակյալ և երաշխավորված ծառայությունի՞ց, թե՞ վճարել համեմատաբար էժան և ընդհանրապես ոչ մի ծառայություն չստանալ: Այնուամենայնիվ, եթե լիցենզավորումը ծնի «ընդհատակ» անցնելու գործընթաց, ապա նմանօրինակ «մատչելի» ծառայություններից օգտվողները պետք է քաջ գիտակցեն, որ իրենց իրավունքների պաշտպանությունը կմնա զուտ իրենց գործը:

Լիցենզավորման մեխանիզմով մասնավոր կազմակերպությունները ոչ միայն հաշվետու կդառնան, այլև որոշակի ֆինանսական պատասխանատվություն և պարտավորություններ կստանձնեն: Իհարկե, հաշվետվության ձև կարելի է համարել նաև ներկայում գործող վիճակագրական տեղեկությունների հաղորդումը, սակայն այս դեպքում պետությունն անմիջական լծակներ չի ունենա համապատասխան միջոցներ կիրառելու այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք չեն հետևում քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանության պահանջներին:

Հարց է առաջանում՝ միջնորդ կազմակերպություններն ի՞նչ լրացուցիչ հմտություններ ու կարողություններ պետք է ունենան: Ենթադրվում է, որ օտարերկրյա պետություններում սեփական քաղաքացիներին աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցելու դեպքում կառաջանան լրացուցիչ նոր խնդիրներ՝ կապված օտարերկրյա պետությունների իմիգրացիոն օրենսդրության, աշխատողների մասնագիտական քննության, տեղափոխության, կացարանով ապահովման, աշխատանքի թույլտվության ձեռքբերման, վերադարձի կազմակերպման և այլ էական պայմանների ապահովման հետ:

Բոլոր դեպքերում, պետք է ընդունել, որ լիցենզավորումը ոլորտում հարաբերությունների կարգավորման գործիքներից մեկն է՝ բայցևայնպես հիշել, որ այն օրենքի ընդունման գերնպատակը չէ:

Համառոտագիրը մշակվել է "Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը" ծրագրի շրջանակներում 2007թ-ի հուլիսի 3-ին կայացած կլոր սեղանի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: